ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՄՇԴ/145
ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ

ք. Երևան «09» «09» 2022 թ.

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը (այսուհետ՝ Պետական մարմին)՝ ի դեմս նախարարության կանոնադրության հիման վրա գործող գլխավոր քարտուղար Գ. Սաֆարյանի, մի կողմից, և «Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ՝ Կատարող)՝ ի դեմս կազմակերպության կանոնադրության հիման վրա գործող տնօրեն Ա. Սվաջյանի, մյուս կողմից, (այսուհետ՝ միասին՝ Կողմեր), կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) հետևյալի մասին:

1.ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Պետական մարմինը հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է Պետական մարմնի կողմից հատկացված միջոցներն ուղղել «Միասին ստեղծում ենք» նախագծի իրականացման մասնակի ծախսերին՝ համաձայն Պայմանագրի անբաժանելի մաս կազմող ծրագրի (Հավելված N 1) և ծախսերի նախահաշվի (Հավելված N 2):

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 *Պետական մարմինը պարտավոր է՝*

2.1.1. Ի կատարումն ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2022 թվականի մարտի 29-ի N 495-Ա/2 հրամանի՝ հիմք ընդունելով ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից ֆինանսավորվող մշակութային դրամաշնորհային ծրագրերի «Ներառական նախագծեր ժամանակակից արվեստի ոլորտում» անվանակարգի մասնագիտական խմբի 2022 թվականի մարտի 10-ի նիստի N 5 արձանագրությունը՝ Կատարողին հատկացնել գումարը «Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեի մասին» օրենքի «1168. Արվեստների ծրագիր» «11005. Մշակութային միջոցառումների իրականացում» միջոցառման ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանը նախատեսված անհատույց դրամաշնորհների հաշվին:

2.1.2. Պայմանագրի 6.1-ին կետով սահմանված ժամկետում ընդունել Կատարողի կողմից Պայմանագրի 2.3.3-րդ ենթակետով սահմանված կարգով ներկայացված հաշվետվությունները, ընդունելուց հետո ստորագրել հանձնման-ընդունման արձանագրությունը:

2.2. *Պետական մարմինն իրավունք ունի՝*

2.2.1. Ցանկացած ժամանակ (պարբերաբար), առանց որևէ սահմանափակումների, ստուգել Կատարողի կողմից Պայմանագրի կատարման ընթացքը՝ չմիջամտելով վերջինիս գործունեությանը,

2.2.2. Կատարողի կողմից Պայմանագրի 2.3-րդ կետով նախատեսված պարտավորությունները չկատարելու դեպքում հետ պահանջել փոխանցված գումարը, միակողմանի լուծել Պայմանագիրը՝ դադարեցնելով պայմանագրով իր վրա դրված պարտավորությունների կատարումը,

2.2.3. Կատարողից պահանջել առանց լրացուցիչ վճարի վերստին կատարել ոչ պատշաճ ձևով կամ կարգով կատարված աշխատանքները,

2.2.4. Պայմանագրի 6.1-ին կետով սահմանված ժամկետում Կատարողից պահանջել ներկայացնել Պայմանագրի 2.3.3-րդ ենթակետով նախատեսված հաշվետվությունը:

2.3. Կատարողը պարտավոր է՝

2.3.1. Պայմանագրից բխող աշխատանքներն իրականացնել՝ ապահովելով Պայմանագրի անբաժանելի մաս կազմող նախահաշվի, ինչպես նաև Պայմանագրի այլ պարտադիր պահանջները,

2.3.2. Պետական մարմնի պահանջով նրան հաղորդել տեղեկատվություն աշխատանքների կատարման ընթացքի մասին,

2.3.3. Մինչև Պայմանագրի 6.1-ին կետով սահմանված հաշվետվությունների ներկայացման ժամկետի ավարտը Պետական մարմնին ներկայացնել հաշվետվություն (ֆինանսական և բովանդակային) իր կողմից իրականացված ծախսերի և կատարված միջոցառումների մասին: Ֆինանսական հաշվետվությունը պարունակում է Պետական մարմնի կողմից հաստատված ձևանմուշով լրացված ձևը (նախահաշվի ծախսերը հիմնավորող հաշվապահական և այլ փաստաթղթերը գտնվում են Կատարողի մոտ, վերջինս պատասխանատվություն է կրում հաշվետվությամբ ներկայացված տվյալների հավաստիության համար), իսկ բովանդակայինը՝ ամբողջական տեղեկատվություն միջոցառման իրականացման և ընթացքի մասին, այդ թվում արդյունքների գնահատումը, մասնակիցների քանակը, կցելով համապատասխան նյութեր (լուսանկարներ, ազդագրեր, հրավիրատոմսեր, մամուլի հրապարակումներ և այլ տեղեկատական նյութեր)՝ էլեկտրոնային կրիչներով,

2.3.4. Պայմանագրից բխող աշխատանքները չկատարելու դեպքում վերադարձնել Պետական մարմնի կողմից տրամադրված գումարը և վճարել տուգանք սույն պայմանագրի 3.1-ին կետում նախատեսված գումարի 5,0 (հինգ) տոկոսի չափով,

2.3.5. Հրապարակել Պետական մարմնի անունը, իսկ համաֆինանսավորման դեպքում տրամադրել ամբողջական տեղեկատվություն՝ ծրագրին աջակցող կազմակերպության, ֆինանսավորման չափի և վերջինիս հետ ձեռք բերված այլ պայմանավորվածությունների մասին,

2.3.6. Ձեռնարկել իր կողմից հնարավոր բոլոր միջոցները՝ Պայմանագրի կատարման համար առաջացած խոչընդոտները վերացնելու նպատակով,

2.3.7. Սույն Պայմանագրի 1.1-ին կետով նախատեսված աշխատանքների կատարման գործընթացը կազմակերպել «Գնումների մասին» ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով,

2.3.8. Պայմանագրով սահմանված աշխատանքների իրականացման արդյունքում առաջացած տնտեսումների, ինչպես նաև չհիմնավորված ծախսերի գումարները վերադարձնել ՀՀ պետական բյուջե՝ ոչ ուշ քան մինչև 2022 թվականի դեկտեմբերի 23-ը:

2.4. Կատարողն իրավունք ունի՝

2.4.1. Պետական մարմնի կողմից Պայմանագրի 2.1.1-ին ենթակետով նախատեսված պարտավորությունները չկատարելու դեպքում միակողմանի լուծել Պայմանագիրը՝ դադարեցնելով Պայմանագրով իր վրա դրված պարտավորությունների կատարումը,

2.4.2. Անհրաժեշտության դեպքում Պայմանագրի անբաժանելի մաս կազմող նախահաշվով նախատեսված ծախսային ուղղություններում իրականացնել յուրաքանչյուր ծախսային ուղղության գումարի 10 տոկոսի չափով շեղում՝ չխախտելով վճարումների համար սահմանված նորմերը:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ԿԱՐԳԸ

3.1. Պայմանագրի 1.1-ին կետում նշված աշխատանքների իրականացման համար Պետական մարմինը Կատարողին հատկացնում է 1000,0 հազար (մեկ միլիոն) դրամ (ներառյալ հարկերը, տուրքերը և պարտադիր այլ վճարները)՝ համաձայն Հավելված 2-ի,

3.2.Պայմանագրի 3.1-ին կետում սահմանված գումարի 80%-ը Կատարողին հատկացվում է Պայմանագրի կնքումից հետո, իսկ 20%-ը՝ Պայմանագրի 4.1-ին կետով նախատեսված

հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրելուց հետո՝ Կատարողի հաշվեհամարին փոխանցելու միջոցով,

3.3. Համաձայն «Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեի մասին» օրենքի 7-րդ հոդվածի 22-րդ կետի հաշվարկված **ԱԱՀ-ի** գծով լրացուցիչ հատկացումները չեն կարող ուղղվել այլ նպատակների և չօգտագործված գումարները 2022 թվականի ընթացքում ենթակա են վերադարձման ՀՀ պետական բյուջե:

4. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1. Պայմանագրի 1.1-ին կետում նշված և ամբողջությամբ կատարված աշխատանքները Կատարողի կողմից ներկայացվում են Պետական մարմնի ընդունմանը ոչ ուշ, քան Պայմանագրով սահմանված ժամկետում: Պետական մարմնի կողմից դրանց ընդունման դեպքում այդ մասին կազմվում է հանձնման-ընդունման արձանագրություն:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ

5.1. Պայմանագրով նախատեսված պարտավորությունները Կողմերը պարտավոր են կատարել պատշաճ և սահմանված ժամկետներում: Դրանք ոչ պատշաճ կամ ժամկետանց կատարելու, չկատարելու կամ կատարելուց խուսափելու դեպքում, ինչպես նաև իրենց գործողություններով կամ անգործությամբ Պայմանագրի կատարման համար խոչընդոտներ ստեղծելու, մյուս կողմին վնաս պատճառելու համար կողմերից յուրաքանչյուրը պատասխանատվություն է կրում մյուս կողմին պատճառած վնասների լրիվ ծավալով՝օրենքով սահմանված կարգով,

5.2. Պայմանագիրը կարող է վաղաժամկետ լուծվել Կողմերից որևէ մեկի նախաձեռնությամբ՝ մյուս կողմի՝ Պայմանագրի պայմանները խախտելու դեպքում: Այդ ժամանակ նախաձեռնող կողմը պետք է ստանա վնասների լրիվ չափով փոխհատուցում,

5.3. Պայմանագիրը վաղաժամկետ դադարեցնելը կամ լուծելը Կատարողի կողմից այն կատարել շարունակելն աննպատակահարմար լինելու դեպքում կամ այլ պատճառաբանությամբ չի թույլատրվում: Նման դեպքում Պետական մարմինը իրավունք ունի կամ ստանալ Պայմանագրի 3.1-ին կետով նախատեսված գումարի լրիվ փոխհատուցումը, կամ պահանջել Պայմանագրի հարկադիր կատարումը,

5.4. Պայմանագրի 1.1-ին կետով նախատեսված աշխատանքների համար պայմանագրով սահմանված ժամկետները Կատարողի կողմից չպահպանելու դեպքում վերջինս Պետական մարմնին վճարում է տույժ՝ հանձնման ենթակա, սակայն չհանձնված աշխատանքների արժեքի 0.05 (հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով՝ ուշացված յուրաքանչյուր աշխատանքային օրվա համար,

5.5. Պայմանագրով նախատեսված հաշվետվությունների ներկայացման համար նախատեսված ժամկետները չպահպանելու դեպքում Կատարողը Պետական մարմնին վճարում է տույժ՝ պայմանագրի գնի 0.05 (հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով՝ ուշացված յուրաքանչյուր աշխատանքային օրվա համար:

6. ՊԱՅՄԱՆԱԳՐՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱՏԱՐՄԱՆ, ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏԸ

6.1. Պայմանագրով նախատեսված աշխատանքի կատարման ժամկետը մինչև 2022 թվականի նոյեմբերի 20-ն է, իսկ հաշվետվությունների ներկայացման ժամկետը մինչև 2022 թվականի դեկտեմբերի 5-ը:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

7.1. Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության արդյունք, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին

կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում Պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է երեք ամսից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրը իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8.ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ

8.1. Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերվելու դեպքում վեճերը լուծվում են օրենքով սահմանված կարգով:

9. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ

9.1. Պայմանագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի պարտավորությունների ողջ ծավալով կատարման ավարտը:

10. ՄՈՆԻԹՈՐԻՆԳԸ

10.1. Պետական մարմինը ծրագրի իրականացման նախնական, ընթացիկ և վերջնական արդյունքների համապատասխանության գնահատման նպատակով իրականացնում է մոնիթորինգ,

10.2. Մոնիթորինգն իրականացվում է Պետական մարմնի և (կամ) նրա կողմից լիազորված անձի կողմից,

10.3. Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով Կատարողին տրվում են ցուցումներ, և կատարվում են առաջարկություններ,

10.4. Պետական մարմինը ցանկացած ժամանակ կարող է ծրագրի շրջանակներում իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով ծրագրին առնչվող ցանկացած փաստաթղթեր և նյութեր,

10.5. Մոնիթորինգի իրականացման ընթացքում Կատարողից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

11. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

11.1. Պայմանագիրը կազմված է 7 թերթից, կնքվում է 2 օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ,

11.2. Սույն պայմանագրում լրացումներ ու փոփոխություններ կատարելու վերաբերյալ համաձայնությունները կազմվում են գրավոր և հաստատվում են Կողմերի ստորագրությամբ:

12. ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿՈՂՄԵՐԻ ՄԱՍԻՆ

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ՝	ԿԱՏԱՐՈՂ՝
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	«Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն» ՊՈԱԿ
Երևան, Վ. Սարգսյան 3	ՀՀ, ք. Երևան, Քաջազնունի 12
Կառավարական տուն N 2	
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	
Հ/Հ 900011032878, ՀՎՀՀ 02698732	Հ/Հ 900018001801, ՀՎՀՀ 02661245
	հեռ.՝ +374 10 552495
Գլխավոր քարտուղար՝	Տնօրեն՝
Դ. Սաֆարյան	Ա. Ավաջյան
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ. Տ.	Կ. Տ.

Հավելված 1

04 ---------- 04 ---------- 2022թ.
N ՕՀՊ 145 ---------- պայմանագրի

ԾՐԱԳԻՐ
«Միասին ստեղծում ենք» նախագծի իրականացման

1	Կազմակերպության անվանում	«Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն» ՊՈԱԿ
2	Կազմակերպության գտնվելու վայր	Ք. Երևան, 0070, Քաջազնունի 12
3	Ծրագրի անվանում	**«ՄԻԱՍԻՆ ՍՏԵՂԾՈՒՄ ԵՆՔ»**
3.1	Բովանդակություն	**«ՄԻԱՍԻՆ ՍՏԵՂԾՈՒՄ ԵՆՔ»** ծրագրի շրջանակում **«ՄԻԱՍԻՆ»** թատերախումբը ներկայացնելու է **«ԱՎԵԼԻ ՈՒԺԵՂ, ՔԱՆ ԹՎՈՒՄ Է»** բեմադրությունը՝ ըստ Ալան Ալեքսանդր Միլնի «Վինի Փու արջուկը» վիպակի: Բեմադրությունը ընկերության, տարբեր իրավիճակներում միասին ելք փնտրելու և գտնելու, առօրյա խնդիրները հաղթահարելու, միմյանց ուժեղ և թույլ կողմերը բացահայտելու և աջակցելու, փոխօգնության, միմյանց գնահատելու և յուրաքանչյուր օրը տոն դարձնելու մասին է: Ներառական թատերախումբը բաղկացած է հաշմանդամություն ունեցող և չունեցող 12 մասնակիցներից: Ծրագրի շրջանակներում հնարավորություն է տրվելու երեխա-ստեղծագործողներին զարգացնել սեփական «ձայնը»՝ ունենալով պրոֆեսիոնալ մասնագետների կողմից աջակցություն և հետադարձ կապ: Ծրագրի ընթացքում մասնակիցները, շփվելով միմյանց հետ, հնարավորինս բացահայտում են իրենց և դիմացինի ստեղծագործական ունակությունները, միասին նույն գաղափարի շուրջը համախմբվելու և թատերական արտահայտչամիջոցներով ներկայանալու հնարավորությունները, իսկ ծրագրի մասնագետները կօգնեն նրանց զգալ, որ իրենք գտնվում են վստահելի և աջակցող միջավայրում: Ծրագրի իրականացման շրջանակում մասնագիտական խմբի (դրամաթերապիստ, հոգեբան, լոգոպեդ) աշխատանքը կնպաստի երեխաների հոգեբանական խնդիրների հաղթահարմանն ու ինքնաարտահայտման հնարավորությունների ընձեռնմանը:
3.2	Նպատակ	Ծրագրի **նպատակն** է բեմադրել և ցուցադրել ներառական ներկայացում՝ ապահովելով երեխաների ստեղծագործական ներուժի բացահայտումն ու սոցիալ-հասարակական կյանքում նրանց լիարժեք ներգրավվածությունը ժամանակակից արվեստի միջոցով՝ անկախ ֆիզիկական և մտավոր զարգացման առանձնահատկություններից: • Ցուցադրել բազմազանություն՝ ստեղծելով ներառական մշակույթ:

		• Ընդգծել հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքները, նրանց դերը արվեստի և մշակույթի ոլորտում: • Աջակցել մտավոր և ֆիզիկական հաշմանդամություն ունեցող երեխա-ստեղծագործողներին, խթանել նրանց աշխատանքը և ջատագովել նրանց ներգրավումը ժամանակակից արվեստի պրակտիկայում: • Ստեղծել զարգացման և սոցիալիզացիայի նոր հնարավորություններ ԿԱՊԿ ունեցող երեխաների համար: • Նպաստել ԿԱՊԿ և հաշմանդամություն ունեցող անձանց հնարավորությունների մասին հանրային կարծիքի փոփոխմանը: • Ստեղծել ներառական կրթության իրականացման այլընտրանքային ոչ ֆորմալ կրթության մոդել և այն ներդնել հանրապետության մարզերում:
3.3	Անցկացման ժամկետ	Մարտ, 2022 – Նոյեմբեր, 2022
3.4	Անցկացման վայր	Ք. Երևան
3.5	Ակնկալվող արդյունքներ	• Մատչելի դարձնել ժամանակակից արվեստը հաշմանդամություն ունեցող կատարողների և հանդիսատեսի համար: • Ստեղծել հնարավորություն ծրագրում ընդգրկված երեխաների անկախ ստեղծագործական աշխատանքի համար և ծառայել որպես տարբեր կրթական ծրագրեր իրականացնող հարթակ թատերական արվեստի ուսումնասիրությամբ հետաքրքրվող երիտասարդների համար: • Ստեղծել եզակի ներկայացում, որը կծառայի արվեստի միջոցով ներառականության տարածմանն ու խրախուսմանը: • Կազմակերպել և իրականացնել հյուրախաղեր Երևանում ԿԱՊԿ ունեցող և չունեցող կատարողների մասնակցությամբ: • Մշակել այլընտրանքային որ ֆորմալ կրթության մոդել:
3.6	Ոչ ֆինանսական ցուցանիշներ	Մեկ բեմադրություն Երկու ներկայացում Թատերախմբի 12 մասնակից

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ՝
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
Երևան, Վ. Սարգսյան 3
Կառավարական տուն N 2
ՀՀ ՊՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011032878, ՀՎՀՀ 02698732
Գլխավոր քարտուղար՝
Գ. Սաֆարյան
(ստորագրություն)
Կ. Տ.

ԿԱՏԱՐՈՂ՝
«Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն» ՊՈԱԿ
ՀՀ, ք. Երևան, Քաջազնունի 12
Հ/Հ 900018001801, ՀՎՀՀ 02661245
հեռ.՝ +374 10 552495
Տնօրեն՝ Ա. Սվաջյան
(ստորագրություն)
Կ. Տ.

Հավելված 2
04 04 2022թ.
N ՕԷՊ 145 պայմանագրի

Նախահաշիվ
«Միասին ստեղծում ենք» նախագծի իրականացման ծախսերի

ՀՀ	Ծախսատեսակի անվանումը	Միավոր	Քանակ	Միավորի արժեքը (հազ. դրամ)	Գումարը (հազ. դրամ)
1.	**Աշխատավարձ**				**558.3**
1.1	Դրամաթերապիստ, բեմադրող	ամիս	8	46.84	375.0
1.2	Նկարիչ-ձևավորող, Նկարիչ-կատարող	ամիս	3	30.6	91.8
1.3	Երաժշտական ձևավորող	ամիս	3	30.5	91.5
2.	**Ծրագրային ծախսեր**				**275.0**
2.1	Բեմադրության ձևավորման համար անհրաժեշտ նյութեր (փայտ, թուղթ, երկաթե օղակ, տախտակ, կտոր)				150.0
2.2	Բեմադրության հագուստ	հատ	15	8.33	125.0
	Ընդամենը				**833.3**
	ԱԱՀ*				**166.7**
	Ընդամենը, ներառյալ ԱԱՀ				**1000.0**

* **ԱԱՀ**-ի գծով լրացուցիչ հատկացումները որպես հարկային պարտավորություն ենթակա են վճարման Կատարողի կողմից որպես **ԱԱՀ**, հակառակ դեպքում ենթակա են վերադարձման ՀՀ պետական բյուջե:

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ՝
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
Երևան, Վ. Սարգսյան 3
Կառավարական տուն N 2
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011032878, ՀՎՀՀ 02698732
Գլխավոր քարտուղար՝
Գ. Սաֆարյան
(ստորագրություն)
Կ. Տ.

ԿԱՏԱՐՈՂ՝
«Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն» ՊՈԱԿ
ՀՀ, ք. Երևան, Քաջազնունի 12
Հ/Հ 900018001801, ՀՎՀՀ 02661245
հեռ.՝ +374 10 552495
Տնօրեն՝ Ա. Սվաջյան
(ստորագրություն)
Կ. Տ.